

Հ Ր Ա Մ Ա Ն N 129-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«24» ՄԱՐՏԻ 2022 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 704-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի նախագծի լրամշակման աշխատանքների խորհրդատվական խումբ:
2. Հաստատել խորհրդատվական խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Սահմանել, որ խորհրդատվական խմբի գործունեությունը ներառում է օրենսգրքի լրամշակման աշխատանքները, դրա առանձին դրույթների վերաբերյալ առաջարկությունների ուսումնասիրությունը և ըստ անհրաժեշտության նախագծում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության և նպատակահարմարության քննարկումը:
4. Խորհրդատվական խմբի գործունեության համակարգումը, այդ թվում՝ խորհրդատվական խմբի գործունեության ժամանակացույցի կազմումը, հանձնարարել Արդարադատության նախարարի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

X

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ
ԼՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՄԲԻ

Զարուհի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ (համաձայնությամբ)
Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)
Արշակ ԳԱՍՊԱՐՅԱՆ	«Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)
Նարե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)
Արտակ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ	«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)
Մոնիկա ՄԱՐԳԱՐՅԱՆ	«Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպություն (համաձայնությամբ)
Դավիթ ԹՈՒՄԱՍՅԱՆ	«Փրոջեքթ հարմոնի» հայկական մասնաճյուղ (համաձայնությամբ)
Իզաբելլա ԼԵՎՈՆՅԱՆ	«Հոգեբանների հայկական գիտական

միավորում» հասարակական
կազմակերպություն (համաձայնությամբ)

Նարե ԱՐԱՄՅԱՆ

«Ընդդեմ իրավական կամայականության»
հասարակական կազմակերպություն
(համաձայնությամբ)

Օֆելյա ԶԱԼՅԱՆ

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» հասարակական
կազմակերպություն (համաձայնությամբ)

Վարուժան ՍԵԴՐԱԿՅԱՆ

«Հայաստանի մանկական ասոցիացիա»
հասարակական կազմակերպություն
(համաձայնությամբ)

Սերգեյ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

«Նոր սերունդ» մարդասիրական
հասարակական կազմակերպություն
(համաձայնությամբ):